ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման վերաբերյալ

Իրավական ակտի հիմնավորումը	
1.	Անհրաժեշտությունը
	Սույն իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ արդեն իսկ երեք անգամ կատարվել է նմանատիպ փոփոխություն, որը մեծ խթան է հանդիսացել հարյուրավոր երիտասարդների վերադարձը Հայրենիք ապահովելու գործում:
2.	Ընթացիկ իրավիճակը – խնդիրները
	Հայաստանի Հանրապետության օրենքի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից խուսափած ու 27 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ խուսափելով քրեական հետապնդումից՝ չեն վերադառնում Հայրենիք :
3.	Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը
	Սույն իրավական ակտի ընդունմամբ չի նախատեսվում տվյալ բնագավառում ներկայումս իրականացվող քաղաքականության փոփոխություն:
4.	Կարգավորման նպատակը – բնույթը
	Սույն իրավական ակտի կարգավորմամբ ապահովվում է հարյուրավոր երիտասարդների վերադարձը Հայրենիք:
5.	Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները – անձիք
	Սույն իրավական ակտի նախագիծը մշակվել է ՀՀ սփյուռքի նախարարության կողմից:
6.	Ակնկալվող արդյունքը
	Օրենքի գործողության ժամկետը երկարաձգելով մինչ– 2011 թվականի մայիսի 1-ը, –ս մեկ անգամ հնարավորություն է տրվում մինչ– 2011 թվականի աշնանային զորակոչը 27 տարին լրացած, պարտադիր զինվորական ծառայությունից խուսափած քաղաքացիներին սահմանված ժամկետում մուծել համապատասխան վճարը, վերադառնալ Հայրենիք – ազատվել քրեական հետապնդումից:

Պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների վրա ազդեցությունը					
Ցուցանիշներ	ընթացիկ (n-րդ) տարի		Հաջորդող 3 տարիները		
			n +1	n +2	n +3
	Ըստ n - րդ տարվա պետական բյուջեի	փոխու-թյունը n - րդ տարվա պետա-կան բյուջեի համեմատ	Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (n)	Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (n)	Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (n)
1	2	3	4	5	6
1.Եկամուտներ	-	-	-	-	-
1.1. պետական բյուջեի եկամուտներ	-	-	-	-	-
1.2. ՏԻՄ եկամուտներ	-	-	-	-	-
2. Ծախսեր	-	-	-	-	-
2.1. պետական բյուջեի ծախսեր	-	-	-	-	-
2.2. ՏԻՄ բյուջեի ծախսեր	-	-	-	-	-
3. Ֆիսկալ ազդեցության գնահատական	-	-	-	-	-
3.1. պետական բյուջե	-	-	-	-	-
3.3. ՏԻՄ բյուջե	-	-	-	-	-

4. Եկամուտների – ծախսերի հաշվարկների մանրամասն ներկայացում (անհրաժեշտության դեպքում կարող է ներկայացվել հավելվածի տեսքով):	«Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի պահանջների համաձայն օրենքի կիրառման արդյունքում ստացած վճարները մուտքագրվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության բնագավառում պետական լիազոր մարմնի կողմից այդ նպատակով բացված հատուկ հաշվում – ուղղվում են ռազմատեխնիկական նշանակության ապրանքների ձեռքբերման ծախսերի ֆինանսավորմանը: 2010թվականին օրենքի կիրառման արդյունքում հատուկ հաշվում մուտքագրվել է 870 միլիոն 955 հազար 900դրամ,ինչը հաշվի առնելով գործողության ժամկետը վեց ամսով երկարացվելու դեպքում կհանգեցնի 2011թվականին – հաջորդ տարիներին լրացուցիչ 400միլիոն դրամից ավելի գումարների մուտքեր հատուկ հաշվում;
4.1. Եկամուտների գնահատում	
4.2. Ծախսերի գնահատում	
5. Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)	

Նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանք	
7.	Այլ իրավական ակտերում փոփոխությունների –/կամ լրացումների անհրաժեշտությունը
8.	Օրենքի նախագծի ընդունմամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ – լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:
9	Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը
	համապատասխանում է:
10	Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)
Տեղեկանք հասարակության մասնակցության մասին	
11	նախագծի վերաբերյալ հասարակությանը իրազեկվել է 2011 թվականի մարտի 18-ին՝ ՀՀ սփյուռքի նախարարության պաշտոնական կայք էջում նախագիծը տեղադրելու միջոցով / www.mindiaspora.am/: